ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԻՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄ

Հոկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու իրենց կողմից սպանձնած Մայր Աթոռի տարբեր ծրագրերի ընթացքը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Մայր Աթոռի միաբան Տ. Արիս աբեղա Տոնոյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հոկտեմբերի 8-ին, «Սրբոց Թարգմանչաց» փոնի առիթով տեղի ունեցավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի սրահների բացման հանդիսավոր արարողությունը:

«Հայարտան» «Գալուստ Գուլբենկյան», «Վարդան Ջինիշյան եւ ՀԲԸՄ Վիրտուալ համալսարան», «Արտուր եւ Յուլյա Սահակովներ» սրահների բացման արարողությանը ներկա էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Հովհաննես Մանուկյանը, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, ՀՀ Սփյուռքի նախարարության ԱՊՀ Կովկասի բաժնի վարիչ Տարոն Շաղոյանը, Կենտրոնի կառուցման բարերար Բորիս Սահակովը, «Ջինիշյան հիշատակի» հիմնադրամի Հայաստանի գրասենյակի պատասխանատու Արմեն Հակոբյանը, ՀԲԸՄ Վիրտուալ համալսարանի ներկայացուցիչ օրիորդ Դալար Կազանջյանը, Վրաստանում գործող արվեստի եւ գրականության մշակներ, թատերական գործիչներ եւ Թբիլիսիի հայ հասարակության ներկայացուցիչներ:

Շնորհավորանքի եւ ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը եւ ուրիշներ:

Բացման հանդիսությանը ելույթ ունեցան «Հայարտուն» կենտրոնի «Սուրբ Ներսես Շնորհալի» երգի եւ երաժշտական գործիքների համույթը, լարային քառյակը եւ նորկազմ մանկապատանեկան երգչախումբը:

Արարողության ավարտին օրհնության խոսքով հանդես եկավ թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Միջոցառումն անցավ ջերմ եւ խանդավառ մթնոլորտում:

1921 թվականին Թբիլիսիում Հովհաննես Թումանյանը հիմնադրել է «Հայարտուն» կենտրոն եւ իր հարկից ներս կազմավորում էր հայ նկարիչների, երաժիշտների, գրողների եւ մտավորականների միություններ: Սակայն 1940-ին դադարեցվում է կենտրոնի գործունեությունը: Տասնամյակներ անց Վիրահայոց թեմի նախաձեռնությամբ կառուցված համանուն կենտրոնը ծառայելու է նույն նպատակին:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պետ. Դումայի պատգամավոր, Նոբելյան մրցանակակիր, ակադեմիկոս Ժորես Ալֆյոռովին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունելով աշխարհահռչակ գիտնականին՝ Սրբազան Հայրն ուրախություն հայտնեց նրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու կապակցությամբ, ինչպես նաեւ գոհունակություն հայտնեց երկու երկրների գիտնականների միջեւ առկա սերտ հարաբերությունների եւ գործակցության համար:

Զրույցի ընթացքում, անդրադարձ կատարելով հավատի եւ գիտության փոխհարաբերություններին, կարեւորվեց կրոնական գիտելիքների եւ գիտության առաջընթացի ու ձեռքբերումների ներդաշնակ ընկալումը ժամանակակից մարդու կյանքում:

Հանդիպման ավարտին Արշակ Սրբազանը, բարձր գնահատելով ֆիզիկայի բնագավառում գիտնականի ունեցած կարեւոր ավանդը, մաղթեց, որ Տերն առավել արդյունավորի նրա գործունեությունը:

* * *

Նույն օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ընդունեց նաեւ Ռուսաստանի Դաշնության Պետրոզավոդսկի քաղաքապետ Նիկոլայ Լեւինի գլխավորած պատվիրակությունը:

Հանդիպմանը Սրբազան Հայրը ողջունեց Վաղարշապատի քույր-քաղաքների քաղաքապետերի մասնակցությունը քաղաքի օրվա տոնակատարություններին՝ վստահություն հայտնելով, որ դա եւս պիտի նպաստի քաղաքների միջեւ հարաբերությունների եւ համագործակցության առավել սերտացմանը եւ զարգացմանը:

Մայր Աթոռի դիվանապետը եւ Պետրոզավոդսկի քաղաքապետն անդրադարձ կատարեցին նաեւ Պետրոզավոդսկի հայկական համայնքի կյանքին եւ գործունեությանը: Այս առիթով քաղաքապետն ընդգծեց փոքրաթիվ հայ համայնքի դերը Պետրոզավոդսկի տնտեսական եւ մշակութային կյանքում:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների եղբայրական փոխահարաբերությունների մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՀԵՐՄԱՆ ԷՀԼԵՐՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 10-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանն ընդունեց Գերմանիայի «Հերման Էհլերս» քաղաքական հիմնադրամի ներկայացուցիչներին: Պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին նաեւ Գերմանիայի Շլեսվիգ-Հոլշտայն նահանգի մի խումբ պետական գործիչներ, համալսարանի պրոֆեսորներ եւ դպրոցների տնօրեններ, Հայաստան էր ժամանել՝ ծանոթանալու հայ ժողովրդի հոգեւոր ժառանգությանը եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությանը հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջունելով հյուրերին՝ Հովակիմ եպիսկոպոսը նրանց հանգամանորեն ներկայացրեց Հայոց Եկեղեցու պատմությունն ու ավանդությունները: Սրբազան Հայրը մասնավոր անդրադարձ կատարեց Հայոց Ցեղասպանության տարիներին եւ Խորհրդային իշխանության շրջանում Հայ Եկեղեցու կրած դժվարություններին եւ այսօր հայ ժողովրդի կյանքում հոգեւոր առաքելությունը լիարժեք իրականացնելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Հովակիմ Սրբազանը գոհունակությամբ ներկայացրեց նաեւ հոգեւոր-եկեղեցական կյանքում Եկեղեցու կողմից ՀՀ անկախության շրջանում արձանագրած հաջողություններն ու ձեռքբերումները՝ ընդգծելով, սակայն, որ բազում են ժամանակի մարտահրավերները, եւ դրանց հաղթահարման գործում հոգեւոր սպասավորները բազում անելիքներ ունեն:

Ի պատասխան պատվիրակության անդամների հարցումների՝ Սրբազանը նաեւ անդրադարձավ Հայոց Եկեղեցու հարաբերություններին Քրիստոնեական այլ եկեղեցիների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 11-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ընդունեց Հայաստանի Գրողների միության նախաձեռնությամբ անցկացվող Օտարագիր հայ գրողների չորրորդ համաժողովի մասնակիցներին՝ առաջնորդությամբ Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի:

Արշակ Սրբազանը, ողջունելով տարբեր երկրներից ժամանած երեք տասնյակից ավելի գրողներին, նրանց փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեմաղթանքներն ու օրհնությունը: Սրբազան Հայրն ուրախալի նկատեց այն հանգամանքը, որ արդեն ավանդույթ է դարձել Օտարագիր հայ գրողների համախմբումը Հայաստանում, որը նպաստում է գրողների փոխճանաչմանն ու շփմանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետը նաեւ անդրադարձավ մտավորականի կարեւոր դերին ինչպես հայ ինքնության ճանաչման եւ պահպանման գործում, այնպես էլ այն բնութագրող բաղադրիչները անաղարտորեն ներկայացնելու առաքելության մեջ, ինչը հաճախ կասկածի տակ է դրվում մեր հասարակական կյանքի զարգացումներում: «...Մտավորական լինելը ոչ թե ինչ-որ գործընթացի մեջ ներգրավված լինելն է, այլ կենսակերպ է, կենսակերպ՝ հոգեւոր-բարոյական արժեքների նկատմամբ հավատարմություն դրսեւորելու նախանձախնդրության մեջ», - մասնավորապես իր խոսքում նշեց Արշակ Սրբազանը:

Հայ գրողների անունից Լեւոն Անանյանն իր երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնեց ջերմ ընդունելության համար:

Հանդիպման ընթացքում Սրբազանը պատասխանեց նաեւ հայ գրողներին հուզող հարցերին, որոնք առնչվում էին Հայ Առաքելական Եկեղեցու ներկայիս գործունեությանը կրթական ոլորտում, աղանդավորական զանազան շարժումներին եւ հայ ժողովրդի հոգեւոր անվտանգության ապահովմանն ուղղված քայլերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ: ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ «ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հոկտեմբեր 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով հայրապետական այցը ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նորին Սրբության այցի ընթացքում, նախաձեռնությամբ Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին Նազար եւ Արտեմիս Նազարյանների՝ հոկտեմբերի 12-ին, Նյու Յորքում ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 60-ամյակի կազմակերպվել էր ճաշկերույթ, որին իրենց մասնակցությունը բերեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ եւ բարեկամներ: Երեկոն հանդիսավարեց ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, որ ողջունեց Մայր Աթոռի բարերարների ներկայությունը ճաշկերույթին եւ ի դիմաց ամենքի շնորհավորեց Նորին Սրբությանը ծննդյան տարեդարձի առիթով:

Ճաշկերույթի ժամանակ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանն անդրադարձ կատարեց ժամանակներին համահունչ՝ հոգեւորականների պատրաստության կարեւոր խնդրին եւ այդ առաքելության իրագործմանն ուղղված Վեհափառ Հայրապետի ջանքերին: Այս առիթով Սրբազանը հյուրերին տեղեկացրեց Գերագույն Հոգեւոր Խորհրդի 2011 թ. մարտի 17-19-ի ժողովին «Հոգեւոր սպասավորների պատրաստության հայրապետական հիմնադրամ» ստեղծելու որոշման մասին, որի նախագահն է տիար Պերճ Սեդրակյանը:

Իր խոսքում ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, անդրադարձ կատարելով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մշտական զորակցությանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանը, տեղեկացրեց, որ ՀԲԸՄ որոշել է իր կրթաթոշակային ծրագրից այս նպատակին հատկացնել մեկ մլն. ԱՄՆ դոլար: Այս առիթով տեր եւ տիկին Նազար եւ Արտեմիս Նազարյանները, որոնց ազնիվ հոգածությամբ կազմակերպվել էր ճաշկերույթը, հիմնադրամին նվիրաբերեցին մեկ մլն. ԱՄՆ դոլար գումար: Մեկ մլն. ԱՄՆ դոլարի նվիրատվություններ կատարեցին նաեւ Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին Սարգիս եւ Հռութ Բեդեյանները եւ տեր եւ տիկին Հրաչ եւ Սյուզան Թուֆայանները: Տեր եւ տիկին Պերճ եւ Վերա Սեդրակյանները հիմնադրամին նվիրաբերեցին 250 հազար ԱՄՆ դոլար գումար, հարյուր հազարական ԱՄՆ դոլար ընծայաբերեցին տեր եւ տիկին Երվանդ եւ Մելիսա Դեմիրճյանները, տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դիդիզյանները, տեր եւ տիկին Նշան եւ Մարգարետ Աթինիզյանները: Տեր եւ տիկին Հարրի եւ Էդնա Քելեշյանները, Օսկար Թաթոսյանը եւ Ջերրի Դեմիրճյանը այս նպատակին հատկացրեցին յուրաքանչյուրը հիսուն հազար ԱՄՆ դոլար: Տեր եւ տիկին Ջորջ եւ Ալիս Գեւորգյանները, տեր եւ

տիկին Զավեն եւ Առլին Դադեկյանները, տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիտ Մկրյանները, դոկտ. եւ տիկին Հարություն եւ Շաքե Մեխճյանները հիմնադրամին նվիրաբերեցին քսանհինգ հազարական ԱՄՆ դոլար:

Հիմնադրամի նախագահը հայտնեց նաեւ, որ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի տեղեկացմամբ նույն նպատակի համար թեմի հայորդյաց կողմից արդեն հավաքվել է մեկ մլն. ԱՄՆ դոլար գումար:

Ճաշկերույթի ավարտին ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով բարերար հայորդիներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցուցաբերվող մշտական զորակցության եւ եկեղեցականաց նոր սերնդի պատրաստության կարեւոր գործին ազնիվ ընծայաբերումներով սատարելու համար:

Ի նպաստ հոգեւորականաց պատրաստության հիմնադրամի, որի ընդհանուր համակարգողն է տիկ. Լոռա Գոնոնյանը, նվիրատվությունները շարունակվում են:

Մայր Աթոռ վերադարձի ճանապարհին՝ Փարիզում, հոկտեմբերի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ շվեյցարահայ համայնքի ներկայացուցիչների հետ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունեց հաղորդումն այն մասին, որ Շվեյցարիայի Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդը լուծարվել է հոկտեմբեր 2-ին կայացած Ընդհանուր Անդամական ժողովի որոշմամբ: Հետխորհրդակցության որոշվեց հանձնարարել Ժնեւի եւ Լեման շրջանի նորակազմ ծուխի ատենապետ Արդեն Շելլեֆյանին եւ արդեն լուծարված Շվեյցարիայի Հայ Առաքելական Եկեղեցու խորհրդի ատենապետ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հիմնադրամի անդամ Դանիել Փափազյանին Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանի հետ, որպես Սուրբ Հակոբ եկեղեցու ընթացիկ հարցերի կառավարման կոմիտե, ձեռնամուխ լինել պատարագների վերսկսմանը Ժնեւի Ս. Հակոբ եկեղեցում եւ Ժնեւի ու Լեմանի շրջանի Ընդհանուր անդամական ժողովի հրավիրմանը:

Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով շվեյցարահայ համայնքի ներկայացուցիչներին, հաջողություն մաղթեց նրանց աշխատանքներին, որով Ժնեւի հայ համայնքը կվերագտնի իր ներքին խաղաղ կյանքը եւ համախոհուրդ՝ համայնքային մնացյալ կառույցների հետ ձեռնամուխ կլինի թեմական կառույցների ձեւավորմանը եւ Շվեյցարիայի ազգային-հոգեւոր կյանքի արդյունավետ կազմակերպմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՈՒՄԸ

Ս/թ հոկտեմբերի 15-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տեր Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ եւ թեմի հոգեւորականների մասնակցությամբ վերօծվեց Արմավիրի թեմի Մրգաշատ համայնքի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Ներկա էին Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, ԱԺ պատգամավոր Ն. Գեւորգյանը, Արմավիրի քաղաքապետ Ռ. Խլղաթյանը, հարեւան համայնքի բնակիչներ, շատ ու շատ հյուրեր:

Միասնական Տերունական աղոթքից հետո, ըստ ծիսակարգի, Սրբազան հայրը ծնկաչոք «Բաց մեզ, Տեր» շարականի երգեցողության ներքո երեք անգամ թակեց եկեղեցու դուռը՝ Երկնային Տիրոջը խնդրելով բանալ ողորմածության դուռը, որից հետո նախ հոգեւոր դասը, հետո ներկա հավատացյալները ոտք դրեցին Աստծո տուն, ուր տեղի ունեցավ եկեղեցու Սուրբ Սեղանի, 16 սյուների եւ մկրտության Սուրբ ավազանի օծման արարողակարգը:

Մրգաշատ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է մատուռի վրա, որի շինարարությունը սկսվել էր 1865 թ., իսկ առաջին օծումը կատարվել էր 1903 թ.: Եկեղեցու երկարությունը 33 մ է, իսկ լայնությունը՝ 17 մ: Ինչպես շատ եկեղեցիներ, այս մեկը նույնպես 1937 թ. մինչեւ 1980 թ. ծառայել էր որպես ցորենի պահեստ: Գյուղի ժողովրդի համար շատ կարեւոր սրբատեղի է եղել Ս. Աստվածածին եկեղեցին: Նրանք այդ ընթացքում հավատով սպասել են եւ եկեղեցու արեւելյան կողմում գտնվող խաչի մոտ աղոթել, որ մի գեղեցիկ օր վերաբացվի իրենց սիրելի եկեղեցին:

2007 թ. մեծ ուրախություն ապրեց գյուղը, երբ Աստծո կամքով Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի միջնորդությամբ, բարերարներ Տեր եւ Տիկին Մազմանյանների աջակցությամբ սկսվեց եկեղեցու վերանորոգումը: Այնուհետեւ եկեղեցու վերանորոգման աշխատանքներին աջակցեցին Խլղաթյան եղբայրները, ԱԺ պատգամավոր Նահապետ Գեւորգյանը, Կարեն Մրկրչյանը, տասնյակ մտահոգ հավատացյալներ իրենց փոքրիկ ներդրումներն են ունեցել եւ ի վերջո համայնքապետ Գեւորգ Դանիելյանի ազնիվ աջակցությամբ եւ գործնական քայլերի արդյունքում վերաբացվեց Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Մինչ եկեղեցու վերաբացվելը, համայնքում ակտիվ են եղել Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հավատացյալները, այցելու հոգեւորականի կողմից խարիսված եկեղեցում մատուցվել է Սուրբ եւ անմահ պատարագ, կազմակերպվել են ուխտագնացություններ: Մրգաշատ համայնքում 2011 թ. հունվարից Մայր Աթոռի կողմից նշանակված Տ. Մարկոս քհն. Մանգասարյանը կիրակի օրերին իր ծառայությունն է բերում այս համայնքին: Նրա ծառայությունը մի նոր հոգեւոր շունչ է հաղորդել համայնքի թե՛ երիտասարդներին եւ թե՛ տարեցներին:

Սրբազան հայրը վերաօծման արարողակարգից հետո իր օրհնության եւ գոհունակության խոսքն ասաց բոլոր բարերարներին եւ հավատավոր ժողովրդին մաղթեց, որ Երկնային Տիրոջը եւ Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն հավատարիմ մնան ու շարունա-

կեն աղոթել՝ այսուհետ, ո՛չ թե եկեղեցու պատերից դուրս՝ այլ եկեղեցու կամարների ներքո, քանի որ օրվա խորհուրդն է վկան, որ երբեք զուր չեն մարդկային անկեղծ աղոթքներն առ Աստված:

Եկեղեցու վերաօծումից հետո Սրբազան հայրը մոտեցավ գյուղի կենտրոնում գյուղացիների պատրաստած բերքառատ սեղաններն օրհնելու, շնորհավորեց Մրգաշատ համայնքի բնակիչներին բերքի տոնի առիթով, որը մրգաշատցիները անվանում են «մաճառի» տոն եւ 2002-ից յուրաքանչյուր տարի մեծ շուքով համագյուղական տոն են կազմակերպում:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

ԿԱՏԱՐՎԵՑ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՈՒՄԸ

Հոկտեմբերի 15-ը Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի, հարակից գյուղերի եւ մարզի ազգաբնակչության համար անմոռանալի ու տոնական օր էր: Մեղրաձոր գյուղում վերաօծվեց 1881-ին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել եւ օծվել է Գեւորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի ձեռամբ օծվեցին եկեղեցու Ս. Սեղանը, Մկրտության ավազանը եւ 16 սյուները: Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները եւ թեմի հոգեւոր հայրերը: Ի թիվս շատ բարերարների՝ Ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգման բարերարներից են նաեւ ամերիկահայ Զաքար եւ Վարուժան սարկավագ Խաչիկյանները:

Վերջում Գերաշնորհ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց, որում մասնավորաբար ասաց.

«Այսօր այս նյութականացված աշխարհում դժվար է գտնել մարդ, որ իր գործերով ապրում է հավիտենականության եւ հավերժության համար, ազգի եւ եկեղեցու համար: Մեր օրերում հոգեւորը անտեսված է, մարմնավորն է կարեւորվում, դա գալիս է հավիտենականության մասին մարդկանց ոչ ճիշտ պատկերացումից: Մարդը ամեն օր մտածում ու հոգ է տանում իր մարմնի մասին եւ չի գիտակցում, որ մարմինն առանց հոգու, հոգեւորի մեռած է: Եթե մարմնի սնունդը կերակուրն է, ապա հոգու սնունդը աղոթքն է՝ իսկ աղոթքի գործնական մասը եկեղեցաշինությունը»:

Տոնախմբությանը ներկա էին Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը, Ազգային ժողովի պատգամավոր Մխիթար Հարությունյանը, Մեղրաձորի գյուղապետ Կառլեն Հովհաննիսյանը եւ մարզային ու քաղաքային իշխանությունների այլ ներկայացուցիչներ: Այդ օրը մեղրաձորցիները տոնեցին նաեւ գյուղի հիմնադրման 180-ամյակը:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՒՈՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻՆ

Հոկտեմբերի 19-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ռեկտոր, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Վերեյսկի արքեպիսկոպոս Եւգենիին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր բարեմաղթանքներն ու օրհնությունը բերելով սրբազանին՝ ընդգծեց, որ Քույր եկեղեցիների ներկայացուցիչների նման այցելությունները հարմար առիթ են ավելի մոտիկից ծանոթանալու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն եւ մեր հավատավոր ժողովրդին, դարերի հոլովույթում նրա կերտած ազգային-հոգեւոր արժեքներին:

Զրույցի ընթացքում կարեւորվեցին երկու եկեղեցիների միջեւ առկա ջերմ եւ եղբայրական հարաբերությունները, մասնավորապես, հոգեւոր կրթական հաստատությունների միջեւ ձեւավորված համագործակցությունը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սանկտ-Պետերբուրգի հոգեւոր ակադեմիայի միջեւ ստորագրված համագործակցության հուշագրին: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Հայոց Եկեղեցու առաջնահերթ խնդիրներից մեկին՝ հոգեւորականների պատրաստությանը: Տեղեկացնելով, որ իր գահակալության տարիներին շուրջ երեք հարյուր եկեղեցականներ են ձեռնադրվել եւ ծառայության կոչվել Հայ Եկեղեցու անդաստանում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատեց, որ դեռ բազում անելիքներ կան այդ ոլորտում՝ հույս հայտնելով, որ Հայաստանում գործող երեք կրթական հաստատությունները՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, Սեւանի Վազգենյան դպրանոցը եւ Հառիճավանքի ընծայարանը, ինչպես նաեւ բարձրագույն կրթությամբ երիտասարդների համար բացված քահանայից լսարանները պիտի լրացնեն եկեղեցականների պակասը:

Իր հերթին Վերեյսկի արքեպիսկոպոս Եւգենին երախտագիտություն հայտնեց Նորին Սրբությանը ընդունելության համար՝ նշելով նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հետ համագործակցելու իրենց մտադրության մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ վարդապետ Սարոյանը եւ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի շրջանավարտ, Մայր Աթոռի վարչա-տնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ներկայացուցիչները Մայր Աթոռում

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ

Հոկտեմբերի 20-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց «Գրական տապան 2011» ծրագրի շրջանակներում եւրոպական տարբեր երկրներից Հայաստան ժամանած մի խումբ գրողների՝ ՀՀ Մշակույթի փոխնախարար Արեւիկ Սամուելյանի ուղեկցությամբ:

Խմբի անունից շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ տիկ. Սամուելյանը ներկայացրեց միջմշակութային շփումների զարգացմանն ուղղված՝ հայ եւ օտար գրողների համատեղ ջանքերով կազմակերպվող գրական եւ մշակութային ծրագրերն ու միջոցառումները:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց եւրոպական գրողների ու հայ գրական աշխարհի ներկայացուցիչների համագործակցության կապակցությամբ: Նորին Սրբությունն իր խոսքում մասնավորապես նշեց. «Գիրն ու գրականությունը հասարակության հոգեւոր-բարոյական նկարագրի ամենաանաչառ ցուցիչն են: Ասվածաշնչում ասվում է, որ «սրտի լիությունից է խոսում բերանը», այսինքն՝ մարդ խոսում, գրում եւ արտահայտում է այն, ինչ որ իր հոգում կրում է: Այս առումով, անշուշտ, յուրաքանչյուր ժամանակ իր ուրույն մտածողությունն ունի, սակայն մենք կարծում ենք, որ քրիստոնեական արժեքներ կրող ազգերի գրականությունը, սնվելով քրիստոնեական հարուստ մշակութային ժառանգությունից, պետք է ուղղված լինի մարդու ներքին հոգեւոր շինվածքի կերտմանը, զորացմանը, ամրացմանն ու հարստացմանը»:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը գրողներին մաղթեց նորանոր ներշնչանքներ, որպեսզի նրանց հայաստանյան տպավորությունները նոր աղբյուր դառնան հետագա ստեղծագործական կյանքում: Նորին Սրբությունը նաեւ պատասխանեց գրողների հարցերին, որոնք վերաբերում էին Հայոց Եկեղեցու գործունեությանը եւ միջեկեղեցական հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից հիմնադրված Հայաստանյան Կլոր Սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի տարեկան (2010-2011թթ.) ամփոփող ժողովը:

Արդեն փասնհինգ տարի գործող Կլոր Սեղան հիմնադրամի նպատակն է աջակցել բարեգործական, գյուղատնտեսական, բնապահպանական, կրթական, մշակութային ու հասարակական տարբեր ծրագրերի իրականացմանը: Վերջին շրջանում Կլոր Սեղանը ներգրավված է նաեւ տարածաշրջանային խաղաղության հաստատման եւ արտակարգ իրավիճակներում օգնության կազմակերպման ծրագրերում:

Ժողովը սկսվեց Կլոր Սեղանի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի աղոթքով եւ բացման խոսքով: Սրբազան Հայրը, ողջունելով ժողովին ներկա Կլոր Սեղանի գործընկերներին եւ աշխատակիցներին, հաջողություն ու բարի ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին: Ներկաներին իր ողջույնի խոսքը փոխանցեց նաեւ ՀԿՍ գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը: Վերջինն ուրախությամբ նշեց, որ հիմնադրամի երկարատեւ աշխատանքի արդյունքները նկատելի են, ընդլայնվել է գործընկերների ցանցը: Հիմնադրամի գործադիր տնօրենը ժողովականներին ներկայացրեց նաեւ միջեկեղեցական կազմակերպության օպերատիվ եւ արագ արձագանքը Տավուշի մարզում տեղի ունեցած սողանքի հետեւանքների հաղթահարման գործում. «Մենք թերեւս միակ միջազգային կազմակերպությունն ենք, որ առաջինն արձագանքեցինք այդ դժբախտ պատահարին եւ հոգեւոր, նյութական աջակցություն ցուցաբերեցինք»:

Ժողովին իր մասնակցությունն էր բերել նաեւ Հայաստանի Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, որ իր ելույթում ներկայացրեց Հանրային խորհրդի գործառույթները, ստեղծման նպատակը եւ կատարվող աշխատանքները:

Այնուհետեւ ՀԿՍ-ի գործադիր տնօրենը եւ ծրագրերի պատասխանատուները ներկայացրեցին հիմնադրամի 2010-2011 թթ. գործունեության հաշվետվությունը, ապա տեղի ունեցան քննարկումներ, նախանշվեցին հիմնադրամի հետագա գործունեության առաջնահերթ ոլորտները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ ՄԱՄՆԱԿՑԵՑԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ Ս. ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան՝ անցեալ շաբաթ խումբ մը ուխտաւորներ առաջնորդեց դէպի Տիգրանակերտ՝ուր տեղի պիտի ունենար վերանորոգուած Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերաօծումը:

Ուխտաւորներու այս խումբը, որուն մաս կը կազմէր նաեւ թեմական պատուիրակ

Գերշ. Տ. Վիգէն արք. Այգազեան, յաջորդ օրը պիտի այցելէր Վան, սակայն Կիրակի օր տեղի ունեցած երկրաշարժին պատճառաւ այս այցելութիւնը ջնջուեցաւ:

Երկրաշարժի դժբախտ պատահարէն ետք՝ թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի հետ հեռախօսային հաղորդակցութեամբ տեղեկացուեցաւ, որ ուխտաւորները այդ երկարաշարժէն ազդուած չեն: Սրբազան Հայրը ըսաւ. «Մեր սրտերը ոգեւորող հոգեպարար արարողութենէ ետք մենք յուզումով լեցուեցանք, երբ երկրաշարժի լուրը ստացանք. կ'աղօթենք աղէտեալներուն եւ անոնց ընտանիքներուն համար»:

Տիգրանակերտի շրջանին մէջ Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերանորոգութիւնն ու վերաօծումը մեծ հետաքրքրութիւն ստեղծած էր. զանազան շրջաններէ ներկայ գտնուեցան բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ ուխտաւորներ: Տասնվեցերորդ դարուն կառուցուած Ս. Կիրակոս եկեղեցին ամբողջ աշխարհի Հայ եկեղեցիներու մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ: Վերջին տասնամեակներուն եկեղեցին անխնամ եւ քանդուած վիճակի մը մէջ կը գտնուէր, սակայն անոր վերանորոգութեան շնորհիւ, որուն ծախքերուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ արտասահմանի հայերը, Ս. Կիրակոս եկեղեցին վերաստացաւ իր պատմական գեղակերտութիւնը:

Արեւելեան թեմի ուխտաւորները Իսթանպուլ հասան ուրբաթ, հոկտեմբեր 21-ին՝ դիմաւորուելով Կ. Պոլսոյ Աթոռի Պատրիարքաթան Ընդհանուր փոխանորդ Գերշ. Տ. Արամ արք. Աթէշեանի կողմէ: Նոյն երեկոյեան անոնք ընթրիքի հիւրը եղան Արամ Սրբազանին: Այս ընդունելութեան համար խորին շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան:

Շաբաթ առաւօտ, ուխտաւորներու խումբը Տիգրանակերտ մեկնեցաւ: Տեղական օդանաւակայանին մէջ դիմաւորուեցաւ Ս. Կիրակոս եկեղեցւոյ ծխական խորհուրդին կողմէ: Անոնք այցելեցին Տիգրանակերտի Հին քաղաքը եւ Ս. Սարգիս եկեղեցին:

Ճամբու ընթացքին կը ծածանէին հայկական, թրքական եւ քրտական ազգային դրօշակները «Բարի եկաք տուն» վերտառութեամբ: Քաղաքին մէջ ուրախութեան եւ ջերմութեան մթնոլորտ կը տիրէր:

Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերաօծումը սկսաւ յետ միջօրէի ժամը 5:00-ին: Գերշ. Տ. Արամ արք. Աթէշեան, Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան, Գերշ Տ. Վիգէն արք. Այգազեան, Գերշ. Տ. Շահան եպս. Սարգիսեան (Սուրիոյ առաջնորդ) եւ Գերշ. Տ. Սահակ եպս. Մաշալեան (Իսթանպուլէն) օծեցին հինգ խորանները: Ներկայ էր նաեւ Կեդրոնական Եւրոպայի Հայրապետական պատուիրակ Հոգշ. Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաճարեան:

Այս արարողութեան մասնակցեցան աւելի քան 2.000 հոգի, որոնց կարգին ուխտաւորներ Իսթանպուլէն, Միացեալ Նահանգներէն, Հայաստանէն, Հոլանդայէն, Գերմանիայէն, Սուրիայէն եւ Լիբանանէն:

Ներկայ էին Իսթանպուլի Միացեալ Նահանգաց Ընդհանուր Դեսպան Սքաթ Քիլնը, Ափանային Միացեալ Նահանգաց Դեսպան Տարիէն Տարնէլ, Տիգրանակերտի քաղաքապետ Օսման Պայտէմիր, Սուր Իչի շրջանի քաղաքապետ Ապտուլլա Տէմիրպաս եւ

Միացեալ Նահանգաց Ռորվիքի (Ռոտ Այլընտ) քաղաքապետ Սթաթ Աւետիսեան, որոնք հետաքրքրութեամբ հետեւեցան արարողութեանց եւ այս պատմական իրադարձութեան:

Արարողութեան աւարտին՝ Տիգրանակերտի քաղաքապետ Օսման Պայտէմիր նախ հայերէն, եւ ապա թրտերէն, թրքերէն, անգլերէն եւ արաբերէն լեզուներով բարի գալուստ մաղթեց այցելուներուն: Հայ ուխտաւորներուն ըսաւ. «Բարի եկաք ձեր տունը: Դուք հիւրեր չէք այստեղ, ասիկա ձեր տունն է: Ամէն անգամ որ հոս կու գաք՝ ձեր տունը եկած կ'ըլլաք: Այսօր ուրախ եւ բացառիկ օր մըն է ոչ միայն ձեզի համար, այլ բոլորիս համար: Մենք բոլորս գիտենք անցեալի պատահարներուն մասին եւ մեր մաղթանքն է որ մեր զաւակները միասնաբար տօնեն յառաջիկայի յաջողութիւնները»: Քաղաքապետի այս արտայայտութիւնները յաճախ ընդմիջուեցան ծափահարութիւններով. ներկաները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին այն հաստատ վկայութեան համար, որ այս քաղաքը իրապէս հայկական պատմական կեդրոն մը եղած է:

«Յոյսի օր մը». Քաղաքապետ Պայտէմիր ճաշկերոյթով մը հիւրասիրեց եկեղեցականներն ու հիւրերը: Ներկայ էին նաեւ Միացեալ Նահանգաց Ընդհանուր դեսպանը եւ Ատանայի դեսպանը:

Ս. Կիրակոս եկեղեցւոյ ծիսական խորհուրդի ատենապետ Վարդգէս Էրկիւն Այիք բարի գալուստ մաղթեց ներկաներուն, իր շնորհակալութիւնը յայտնեց բոլոր անոնց՝ որոնք իրենց նիւթական մասնակցութիւնը բերած էին եկեղեցւոյ վերանորոգման ծախքերուն եւ հրաւիրեց Գրշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանը իր սրտի խօսքը ըսելու:

Սրբազան Հայրը ի մէջ այլոց ըսաւ. «Այսօրուան իրականացած յաջողութիւնը մեծ նշանակութիւն ունի բոլորիս համար: Միացեալ ջանքերու շնորհիւ սկիզբ առաւ այս ծրագիրը: Այս նախաձեռնութեան շնորհիւ մենք յուսալից ենք, որ այսօրը ամենէն աւելի յոյսի օր մըն է, օր մը՝ ապագային նայելու լաւատեսութեամբ: Որպէս Ամերիկայի ուխտաւորներ բախտաւոր ենք, որ մասնակից կ'ըլլանք այս պատմական հանդիսութեան եւ կը բաժնենք լաւատեսութեան յոյսը»: Ապա Սրբազան Հայր «Ս. Վարդան» մրցանակը յանձնեց քաղաքապետ Օսման Պայտէմիրի եւ քաղաքապետ Ապտուլլա Տէմիրպասի: Իսկ Գերշ. Տ. Արամ արք. Աթէշեան արծաթեայ յուշանուէրներ յանձնեց զոյգ քաղաքապետներուն եւ եկեղեցւոյ վերանորոգման ծրագիրի ճարտարապետին:

Քաղաքապետ Պայտէմիր եզրափակեց օրուան հանդիսութիւնը շեշտելով. «Այսօրուան առիթը միայն տօնախմբութեան առիթ մը չէ, այլ օր մը՝ մեր ներողութիւնը յայտնելու անցեալի ցաւալի միջադէպերուն համար: Մենք կ'ուզենք, որ դուք դարձեալ զաք ոչ որպէս զբօսաշրջիկ, այլ որպէս ձեր տունը վերդարձող անհատներ»:

Կիրակի առաւօտ վերաօծուած Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Արամ արք. Աթէշեան: Իսկ Կոմիտասեան պատարագը երգեցին Ֆէլրիքոյի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ դպրաց դասի անդամները: Հայ եկեղեցականներու կարգին ներկայ էին նաեւ Ապիտէնի Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Եպիսկոպոսը, Կոնստանդնուպոլսոյ Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչը եւ զոյգ քաղաքապետները:

Յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ առաջնորդներու, հոգեւոր հովիւներու, Ս. Խորանի սպասարկողներու եւ Տիգրանակերտի հաւատացեալներու հոգիներու խաղաղութեան համար:

Յաջորդ օրը ծրագրուած էր երթալ Վան՝ այցելելու համար Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, սակայն երկրաշարժի պատճառաւ ջնջուեցաւ այս այցելութիւնը: Ուխտաւորները այցելեցին Մարտինի մօտ Տէրէքի շրջանին մէջ գտնուող եւ ԺԷ դարուն կառուցուած Ս. Գէորգ եկեղեցին: Անոնք հանդիպեցան եկեղեցւոյ հոգատարին, որ 300 տարուան հնութիւն ունեցող Աստուածաշունչ մը եւ շարակնոց մը կը պահէր եկեղեցւոյ մէջ: Ուխտաւորները դիմաւորուեցան Էյուպ Կիւվէնի կողմէ, որ հեղինակն է հայկական ցեղասպանութենէն վերապրողի մը կենսագրական գիրքին՝ «Գոհար» խորագիրով: Այս այցելութեան ընթացքին որոշ թիւով տեղացիներ մօտեցան ուխտաւորներուն յայտնելու համար, որ իրենք հայկական ծագում ունին:

Խումբը հոկտեմբեր 25-ին կը վերադառնայ Իսթանպուլ եւ շաբաթավերջին՝ Միացեալ Նահանգներ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԻՒԱՆ

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

Հոկտեմբեր 25-ին ՀՀ Ազգային ժողովում քննարկման դրվեցին եւ առաջին ընթերցմամբ ընդունվեցին «Գույքի հարկի մասին» եւ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներում առաջարկված փոփոխությունները՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն գույքի եւ հողի հարկերից ազատելու վերաբերյալ:

Այս առնչությամբ հասարակության մեջ, լրատվամիջոցներում ընթացող քննարկումների եւ հնչող քննադատության առիթով հարկ ենք համարում տեղեկացնել հետեւյալը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ողջունում է օրենքներում համապատասխան այդ փոփոխությունների որդեգրումը, ինչն արտահայտությունն է հայրենի պետության կարեւոր զորակցության՝ Մայր Եկեղեցուն հայ ժողովրդի կյանքում դարերի իր հոգեւոր առաքելության իրականացման ճանապարհին:

Ինչ վերաբերում է ԱԺ-ին ներկայացված Մայր Աթոռի անշարժ գույքի հրապարակված աշխատանքային ցուցակին եւ դրանում տեղ գտած տարակուսանք առաջացնող անուններով կառույցներին, ապա դրանք ներկայացված են այն անվանումներով, որոնցով փոխանցվել են Եկեղեցուն կամ ձեռք բերվել եւ դեռ արձանագրված են ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում: Նշյալ կառույցներն այսօր Եկեղեցու կողմից օգտագործվում են հոգեւոր-կրթական, սոցիալական բարեգործական տարբեր նպատակներով:

Միեւնոյն ժամանակ փեղեկացնում ենք, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին շահութաբեր ձեռնարկություններ չունի, եւ Մայր Աթոռի եկամուտները գոյանում են մոմի, հոգեւոր գրականության վաճառքի եւ ազգային հաստատությունների ու անհատների բարերարությունների շնորհիվ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՌՈՒՄԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 25-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր Աթոռի Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանն ընդունեց Ռումինիայի քաղաքապետերի պատվիրակությունը, որի կազմում էին Պիտեշտի քաղաքապետ Թուդոր Պենդիուկին, Ֆոկշանի քաղաքապետ Բոգդան Մատիշանին, Ռոմանի քաղաքապետ Լաուրենցիու Լեոբյանուին, Գեռլայի քաղաքապետ Օվիդյու Դրագանին, Դումբրավենի քաղաքապետ Ջորջեսկա Իրիմիեյին եւ Ֆրումոասայի քաղաքապետ Տիբոր Ֆերենցին:

Սրբազան Հայրը, ողջունելով քաղաքապետերի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեմաղթանքներն ու օրհնությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց հայ եւ ռումին ժողովուրդների բարեկամական ու եղբայրական հարաբերություններին: Սրբազանն իր խոսքում ընդգծեց, որ նման ջերմ հարաբերությունների վկայությունն ու երաշխիքն է այն իրողությունը, որ Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդն իր համայնքով Ռումինիայում ունեն երկար եւ ուրույն պատմություն, եւ հայ ժողովրդի դարավոր այս ներկայությունը կերտել է հարուստ մշակութային ժառանգություն: Այս առիթով Սրբազան Հայրն իր գնահատանքը բերեց ներկաներին եւ Ռումինիայի իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակների հանդեպ մշտապես դրսեւորած եղբայրական վերաբերմունքի համար: Կարեւորելով նման փոխադարձ այցելությունների անհրաժեշտությունը որպես երկու ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների պահպանման երաշխիք՝ Նաթան Սրբազանը նշեց, որ հաջորդ տարի Նորին Սրբության նախագահությամբ կտրոնախմբվի Սուչավայի հայոց վանքի 500-ամյակը՝ վստահություն հայտնելով, որ այն իրապես պետք է լինի ոչ միայն հայ, այլեւ ռումին հավատացյալ ժողովրդինը:

Քաղաքապետներն իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար՝ մեծ օրհնություն նկատելով հայոց հոգեւոր կենտրոնում գտնվելը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՌԴ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանական խորհրդի նախագահ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Հասարակական պալատի պատվիրակությունը՝ գլխավորությամբ ՌԴ Հասարակական պալատի քարտուղարի տեղակալ Միխայիլ Օստրովսկու:

Պատվիրակությանն ուղեկցող ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը ներկայացրեց ՀՀ Հանրային խորհրդի եւ Հասարակական պալատի միջեւ հաստատված կապերը եւ հոկտեմբերի 27-ին ստորագրված համաձայնագրով նախանշվող համագործակցությունը տարբեր ոլորտներում:

Այնուհետեւ Նաթան Սրբազանը ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները: Սրբազան Հայրը կարեւորեց հանրային խորհուրդների դերակատարությունը հասարակության կյանքում եւ ողջունեց տարբեր երկրների համանուն կառույցների միջեւ հաստատվող համագործակցությունը՝ ի խնդիր հանրության կյանքում առկա հարցերի համատեղ ուժերով հաղթահարման: Սրբազանը նաեւ ընդգծեց հանրային խորհուրդների կարեւոր առաքելությունը հասարակական կյանքում բարոյական արժեքների ամրապնդման գործում:

ՌԴ Հասարակական պալատի քարտուղարի տեղակալ Միխայիլ Օստրովսկին իր ուրախությունն արտահայտեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով: Իր հերթին նա ներկայացրեց ՌԴ Հասարակական պալատի գործունեությունը եւ համագործակցությունը եկեղեցիների հետ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ հայ համայնքին, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների ջերմ եղբայրական հարաբերություններին: Պատվիրակությունն ուրախություն հայտնեց նաեւ Մոսկվայում հայկական եկեղեցական համալիրի կառուցման առիթով՝ նկատելով, որ դա երկու հավատակից ժողովուրդների ջերմ հարաբերությունների խոսուն վկայությունն է:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում կատարվել են նոր նշանակումներ:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Զավեն արեղա Յազիչյանն ազատվել է իր պարտականություններից եւ ծառայության նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Տ. Մակար վարդապետ Հակոբյանը, ազատվելով Ս. Գայանե վանքի վանահոր

պարտականություններից, ծառայության է կոչվել Սյունյաց թեմում՝ որպես առաջնորդական տեղապահ:

Մայր Աթոռի միաբան Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը նշանակվել է Հառիճավանքի ընծայարանի տեսուչ: Տ. Կորյուն աբեղա Առաքելյանը, ազատվելով Շիրակի թեմում սպանձնած պարտականություններից՝ հոգեւոր իր ծառայությունը կշարունակի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ՉԵՐՔԵԶՅԱՆԸ

Հոկտեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի հոգեւոր սպասավոր Տ. Հակոբ քահանա Չերքեզյանը՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանի եւ թեմական խորհրդի խնդրանքի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավագանի անունով՝ Սարգիս Չերքեզյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ